

ՄԻՋՆԱԿԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԻԱՀԵՐՁՄԱՆ ԵՎ ԿԵՆԴՐԱՆԱՀԱՏՄԱՆ  
ԱՉԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ս. Ա. ՎԱՐԳԱՆՅԱՆ

Գիահերձման և կենդանահատման (vivisection) պրակտիկան դարեր շարունակ եղել է անատոմիական ու ֆիզիոլոգիական հետազոտությունների հիմնական մեթոդներ: Անտիկ Ալեքսանդրիայում, որտեղ շարունակվում էին Հին Եգիպտոսի ավանդույթները մոսիանների գմուման ուղղութիւնով, մ. թ. ա. IV—III դարերում անվանի բժիշկներ էրագիսթրատը և Հերոֆիլը կատարել էին այդպիսի բազմաթիվ հետազոտություններ: Մեր թվարկության II դարում հուլիական բժիշկ Գալենը՝ գիտական անատոմիայի և ֆիզիոլոգիայի հիմնադիրը, այստեղ ուսումնասիրել է մարդու մարմնի կառուցվածքի և գործունեության հետ կապված կարևոր հարցեր: Հետագայում Ալեքսանդրիայում են ծավալել իրենց գործունեությունը հայ մշակույթի նշանավոր ներկայացուցիչներ և առաջին հերթին անվանի փիլիսոփա Դավիթ Անհաղթը (V—VI դդ.), որոնք մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում բժշկության հարցերի նկատմամբ: Մել վերաբերում է դիահերձմանը և մանավանդ կենդանահատմանը, ապա պետք է նշել, որ նույնիսկ անտիկ շրջանում Ալեքսանդրիայից դուրս նրանք խիստ արգելքների էին հանդիպում՝ կապված որոշ կրոնական նախապաշարումների հետ: Այսպես օրինակ, Գալենը, հեռանալով Ալեքսանդրիայից, հետագայում Պերգամոն և նույնիսկ Հռոմում զրկված էր մարդկանց դիակները հերձելու հնարավորությունից՝ ստիպված լինելով սահմանափակվել կենդանիների վրա կատարված փորձերով: Այդ կրոնական և պետական արգելքներն ավելի սաստկանում են միջին դարերում, ինչպես Եվրոպայում, այնպես էլ Արևելքում: Հայտնի է, որ միջնադարյան Եվրոպայի համալսարաններում դիահերձման արարողության համար պահանջվում էր հատուկ թույլտվություն կայսրից և պապից<sup>1</sup>: Նույնիսկ Վերածննդի դարաշրջանում Եվրոպայում նշանավոր անատոմ Անդրե Վեզալին ստիպված էր զաղտնի կատարել դիահերձումներ՝ զոդանալով դիակներ գերեզմանատներից:

Միջնադարյան Հայաստանում և մանավանդ Կիլիկյան Հայկական թագավորության օրոք մեծ հետաքրքրություն էր առաջացել մարդակազմության հարցերի նկատմամբ: Դեռևս XII—XIII դարերում այստեղ ստեղծվել էին Արևուսյիղի «Մարդակազմութիւնը» և Մխիթար Հերացու անատոմիական գործերը: Հայտնի է նաև, որ ներսես լամբրոնացու ակադեմիայում, Սիս մայրաքաղաքում, այլ առարկաների շարքում դասավանդում էին մարդակազմություն, իսկ Կիլիկյան բժշկարաններում բուն բուժական գործին զուգահեռ ծավալվում էր նաև ուսումնագիտական գործունեություն: Սակայն հարց է ծագում՝ այստեղ կատարվող անատոմիական ուսումնասիրությունները հիմնվո՞ւմ էին միջնադարյան հայ բժիշկների սեփական փորձի վրա, թե սքոլաստիկ բնույթ էին կրում, ինչպես միջնադարյան Եվրոպայում: Այլ ձևով ասած՝ գոյություն ունե՞ր արդյոք այդ շրջանում դիահերձման և կենդանահատման նկատմամբ պետական-կրոնական արգելքների բացակայություն Կիլիկյան Հայաստանում:

1947 թ. անվանի հայագետ Լ. Խաչիկյանը հրատարակեց կարևոր մի վկայություն XIII դարի նշանավոր գիտնական Հովհաննես Երզնկացու «Քարոզներից», որտեղ ասված է. «Զոր օրինակ բժիշկ հանճարեղ եւ իմաստուն ըզմահապարտ ոք առեալ բազմադիմի մահուամբ սպանանէ եւ ազգի-ազգի կտտանօք եւ կեղեքելով մինչ զտանէ զամենայն յօղութոցն եւ զշացն եւ գերակացն եւ զվերոտեսցն զորպիսութիւն. ի ձեռն միոյ լլկանաց՝ բազմաց արասցէ աւգուտս»<sup>2</sup>: 1962 թ. հրատարակվեց երկրորդ վկայությունն այդ մասին՝ միջնադարյան հայ

<sup>1</sup> Sб'а Гален. О назначении частей человеческого тела, М., 1971, էջ 3—24:

<sup>2</sup> Sб'а Nancy G. Sirisi. Medieval and early Renaissance Medicine, London, 1990, էջ 86—90:

<sup>3</sup> Լ. Խաչիկյան, Գիահերձումը հին Հայաստանում, «Տեղեկագիր» Հայկ. ՍՍՌ ԳԱ, 1947, № 4, էջ 84:

ականավոր փիլիսոփա Վահրամ Բարունու «Լուծումը մարդակազմութեան գրոցն Գրիգորի նիւսացոյ» երկասիրությունից<sup>4</sup>: Բերում ենք այն ամբողջութեամբ. «Իւրաքանչիւրը, որ ի ներքըս ի մեզ է՝ սիրտն, զլեւորդ, փորոտիքն, երակքն և այլ, որ ի մեզ է, թէ ինչ տեսութիւն և կայունն ունի, կամ թէ զիւրոգ, կամ որպէս են սոքա՝ հերձին զմահապարտս ի մարդկանէ և տեսին ևօք»: Վերջապես հայագետ Փ. Անթարյանն իր երկու հրատարակումներում (1967, 1977) նույնպէս միացած վերոհիշյալ վարկածին, հիմնվելով XIII դարի մեկ այլ հայտնի գիտնականի՝ Հովհաննես Վանականի հետևյալ վկայութեան վրա. «Հարց. բժշկութիւն ո՞րպէս ուսանի Պատասխան, զոր հերձելով եւ զոր ճեխելով, եւ զոր սովեցան էին, եւ գինի տային ըմպել, որ եռայր եռականին եւ զարժմունս տեսնալ՝ ուսան»<sup>5</sup>:

Ինչպես տեսնում ենք, այս երեք վկայություններում էլ ոչ մի անգամ չի հիշատակվում Հայաստանը: Դեռ ավելին, Վահրամ Բարունու խոսքը վերաբերում է IV դարի հուն հեղինակ Գրիգոր Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գործին: Այստեղ «Տեսութիւն իմն բժշկականագոյն յաղագս մարմնոյս մերոյ կազմածի սակաւութ» զխում գտնում ենք համապատասխան հասկած. «Այլ զճշգրիտ մարմնոյս մերոյ կազմած ուսուցանէ իւրաքանչիւր ոք գինքն, յորոց տեսանին և կեայ և զգայ զառանձինն ընտիւրն իւր վարդապետ ունեւելով: Գոյ մարթ և զայն, որ ի գիրս գործասիրութեամբ գրեցաւ յայդպիսի իմաստնոց յաղագս սոցայն պատմութիւն ի ձեռն առեալ զամենայն ինչ հաւաստի ուսանել, որոց ոմանց որպէս զիարդ ունի տեսութիւնն իւրաքանչիւր ոք, որ ի մեզն է, ի ձեռն հերձոյ և պատուման ուսան» (ձեռ. № 488, էջ 100ա): Ինչ վերաբերում է Հովհաննես Երզնկացու վկայութեանը, ապա այն էլ, ամենայն հավանականութեամբ, գրքային քնույթ ունի: Այսպես օրինակ, իր քարոզներին մեկում Երզնկացին տարբեր առիթներով խոսում է այն մասին, որ օգտվել է անտիկ գիտնականներ Գալենի և Ասկղեպիադի գործերից. «Որպէս ուսար ի խոհեմահանճար արանց, որք զընտիւրն իս քննեցին և աւանդեցին մեզ, թէ որպէս կենդանակերպք են յԱստուծոյ ստեղծուածս. են որ աւղախնք են և են որ ցամաքայինք են և որ ծովայինք... Արդ որպէս գտար ի բաղադատութիւն բժշկացն Գաղիանոսի և Ասկղեպիոնի զազգս նոցայ և զբարս նոցա, զրեցար ի կարգի» (ձեռ. № 2173, էջ 356բ): Ժամանակին մենք նույնպէս ընդունել ենք վերոհիշյալ վարկածը դիահերձման և կենդանահատման ազատութեան մասին միջնադարյան Հայաստանում, որն այդ շրջանում կասկած չէր հարուցում հայ բժշկապատմաբանների շրջանում: Այդ վարկածի լույսի տակ մեկնաբանել ենք նաև Դավիթ Անհաղթի «Վերլուծութիւն ընդհանուր» Պոլիփիլոսի գրքում առկա հետևյալ տողերը. «Վերլուծութեան գործն է գոյի բաժանումը այն մասերի, որոնցից նա կազմված է, ինչպես օրինակ, երբ մեկը վերցնում է մարշուն և անդամահատում, հերձում նրա ոտքերը, ձեռքերը, զլուխը և այնուհետև մարմինը բաժանում ոսկրերի, շլերի, անոթների և նյարդերի»<sup>6</sup>: Սակայն այսօր մենք հակված ենք մշտածելու, որ այս դեպքում էլ հուշակավոր հայ փիլիսոփան անդրադարձել է Ալեքսանդրիայի բժշկական դպրոցի գործունեութեանը: Դեռ ավելին, վերոհիշյալ բոլոր վկայությունների հիմքում, մեր կարծիքով, ընկած է անտիկ բժշկության փորձն արտացոլող մի սկզբնաղբյուր, որ մեծ ճանաչում էր վայելում միջին դարերում: Խոսքը Գալենի «De anatomia mortuorum» աշխատության մասին է, որը նա գրել է 164—166 թթ. Հռոմում: Այս կարևոր քննադիրը, որը երկար ժամանակ կորած էր համարվում, վերջերս հունգարացի գիտնական Իշտվան Օրմոսի նյութերով հայտնաբերվեց Կահիրեի Եգիպտական Ազգային գրադարանի երկու արաբական ձեռագրերում<sup>7</sup>: Հայտնի է, որ սկզբնաղբյուրի թարգմանությունը կատարվել է հունարեն քննադիր ասորերեն՝ Հունայնի, իսկ ասորերենից արաբերեն՝ Հուրայի կողմից: Այստեղ Գալենը հանգամանորեն խոսում է դիահերձման և կենդանահատման, որպես անատոմիական և ֆիզիոլոգիական ուսումնասիրության հիմնական միջոցների, ուսումնասիրության մասին՝ անգրադառնալով նրանց սկզբունքներին, տարբերություններին, ինչպես նաև թերապիայի ու վիրաբուժության համար նրանց անհրաժեշտության հարցին: Երբ 1988 թ. Համաշխարհային IV Գալենյան սիմպոզիումի օրերին Բեռլինում Ի. Օրմոսը ներկայացրեց վերոհիշյալ քննադիրը,

<sup>4</sup> Գ. Գրիգորյան, Դիահերձման գոյությունը միջնադարում հավաստող մի նոր փաստ, «Քննադիր Մատենադարանի», Երևան, 1962, № 6, էջ 294:

<sup>5</sup> Փ. Անթարյան, Միջնադարեան Հայաստանում իրագործվող դիահերձման վերաբերյալ և մեկ նոր վկայութիւն, «Սիոն», 1977, Գ, էջ 61—64:

<sup>6</sup> Արուսայիդ, Յաղագս կազմութեան մարդոյ, աշխ. Ս. Վարդանյանի, Երևան, 1974, էջ 11:

<sup>7</sup> Գրիգորի. Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց, աշխ. Ա. Կոնյանի, Երևան, 1962, ներածութիւն, էջ XXXVI:

<sup>8</sup> Ս. Վարդանյան, Բժշկութիւնը հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1952, էջ 16:

<sup>9</sup> Տե՛ս Istvan Omos. Bemerkungen zur ed'torischen Bearbeitung der Galenschrift «Ober die Sektion toter Lebewesen»—im Verhandlungen des IV Internationalen Galen-Symposiums «Galen und das hellenistische Erbe» Stuttgart, 1988, S. 165—172:

մեզ պարզ դարձավ, որ միջնադարյան հայ գիտնականները քաջածանոթ են եղել այդ սկզբնաղբյուրի հետ: Օրմոսի զեկուցումից հետո ծավալված գիտավեճի ընթացքում մեր կողմից ներկայացրած տվյալներն այդ մասին մեծ հետաքրքրություն առաջացրին: Իսկապես, երբ համեմատում ենք առանց կանխակալության միջնադարյան հայ մատենագիրների վերահիշյալ վկայությունները Գալենի «De anatomia mortuorum» երկի հետ, ապա ակնհայտ է դառնում նրանց ներքին սերտ կապը հունական սկզբնաղբյուրի հետ: Հարց է ծագում, արդյո՞ք գոյություն ունեն միջնադարում Գալենի երկի հայերեն թարգմանությունը, թե մեր հայ հեղինակներն օգտվել են հունարեն կամ գուցե արաբերեն րնագրից: Այդ տեսանկյունից ուսումնասիրել ենք Մաշտոցի անվ. Մատենադարանի բոլոր այն ձեռագրերը, որոնք այսպես կամ այնպես կապված են Գալենի հետ (ձեռ. №№ 547, 3278, 5611, 5631, 5728, 6232, 8749, 10134 և ուրիշներ)<sup>10</sup>: Հաշվի առնելով, որ միջնադարյան հայ մատենագիրները, սկսած Գավիթ Անհաղթից, մեղրբրումներ են կատարել Գալենի «De anatomia mortuorum» աշխատությունից, բացառված չէ, որ նրանք ձեռքի տակ ունեցել են վերջինիս հայերեն թարգմանությունը:

Առ այսօր մեզ չի հաղողվել հայտնաբերել այդ կորած րնագիրը, սակայն մեր պրպտումներն այդ ուղղությամբ շարունակվում են:

**С. А. ВАРДАНИАН—Вокруг вопроса о свободе вскрытия трупов и вивисекции в средневековой Армении.**—На основании средневековых армянских рукописных источников известным армяповедом Л. Хачикяном было высказано предположение об отсутствии церковно-государственных запретов на вскрытие трупов и вивисекцию в средневековой Армении. Эта гипотеза была в дальнейшем поддержана в ряде публикаций. Однако анализ средневековых рукописных свидетельств в трудах Давида Анахта, Ованеса Ерзикаци, Ваграма Рабуни и Ованеса Ванакана допускает и иное толкование, поскольку в них нет прямого указания на проведение вскрытия трупов и вивисекцию в Армении того времени. Скорее всего эти данные взяты из трудов античных анатомов и восходят к практике александрийской школы.

<sup>10</sup> Տե՛ս Օ. եգանյան, Ա. Զեյրուեյան, Փ. Անրարյան, Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Բ, Երևան, 1965, 1970: